

**ՀԱՅՈՑ ԼԵՋՎԻ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՏԱՐԲԵՐԱԿՆԵՐԻ ՈՒՍՈՒՄԵԱՍԻՐՈՒԹՅԱՆ
ՀԻՄՆԱԿԱՆ ՍԿՋԲՈՒՆՔՆԵՐԸ**

ՀՈՎՀԱՆՆԵՍ ԶԱՔԱՐՅԱՆ

Լեզուն հասարակական երևույթ է. նրա հիմնական գործառույթը հասարակության հաղորդակցման պահանջների բավարարումն է: Լեզուն ոչ միայն ծառայում է հասարակությանը իբրև հաղորդակցման միջոց, այլև արտացոլում է հասարակական երևույթները, հարաբերությունները, հասարակության կառուցվածքը: Այդ արտացոլումը չի սահմանափակվում միայն բառապաշարի՝ հասարակական հարաբերություններ նշող, հասարակական որոշակի երևույթների հետ կապված շերտերի, հատուկ տերմինների, կայուն բառակապակցությունների, դարձվածքների, շարահյուսական հատուկ կառուցվածքների գոյությունը: Հասարակական կառուցվածքը լեզվում արտացոլվում է նաև լեզվական բոլոր մակարդակներում հասարակական տարբեր արժեք, հեղինակություն ու բաշխում ունեցող զուգաձևությունների, տարբերակների գոյությամբ:

Արտալեզվական գործոնների անտեսման դեպքում այդ զուգաձևությունները լեզվի ներքին կառուցվածքի տեսակետից համարժեք՝ ազատ տարբերակներ են: Սակայն ամբողջ լեզվական համակարգի տեսակետից դրանք «դիրքային տարբերակներ» են այնքանով, որ ունեն իրենց գործառույթյան յուրահատուկ ոլորտները, միատեսակ և հավասար չափով չեն գործածվում տարբեր իրադրություններում, հասարակական տարբեր կարգավիճակ (ստատուս) ունեցող խմբերի կողմից: Խոսքում հանդիպելով՝ դրանք որոշակի տեղեկություն են տալիս խոսքային գործողության (ակտ) մասնակիցների հասարակական կարգավիճակի, դասային պատկանելության, բարբառային ու հասարակական ծագման, մասնագիտության ու զբաղմունքի, ընտանիքի, կրթության, տարիքի, նրանց հասարակական փոխհարաբերության, միմյանց նկատմամբ ունեցած վերաբերմունքի, նպատակների, խոսքային գործողության ֆիզիկական իրադրության, վայրի, ժամանակի, թեմայի մասին և այլն, այսինքն՝ այն ամենի մասին, ինչ կոչվում է խոսքային իրադրություն:

Հասարակական արժեք ունեցող զուգաձևությունները, շնորհիվ իրենց բաշխման որոշակիության, միավորվում են տարբեր համակցությունների ձևով, կազմելով լեզվի հասարակական տարբերակները: Ամեն մի լեզու անհրաժեշտորեն և անխուսափելիորեն գոյություն ունի հասարակականորեն տարբերակված ձևերով:

Ուսումնասիրելով լեզվի հասարակական տարբերակների համակարգը, կարելի է որոշակի տեղեկություններ ստանալ այդ տարբերակների գործածության ոլորտների ու հասարակական միջավայրերի, փոխհարաբերության, զարգացման, փոփոխությունների ուղղության ու բնույթի, հասարակական հեղինակության, մշակվածության աստիճանի, հասարակական տարբեր խմբերի կողմից դրանց նկատմամբ ցուցաբերվող վերաբերմունքի, դրանց փո-

փոխությունների ընթացքի վրա ներգործող հասարակական երևույթների ու հանգամանքների, ինչպես նաև հասարակական այս կամ այն տարբերակը գործածող հանրության հասարակական կառուցվածքի, քանակական կազմի, կարգավիճակի, տնտեսական, մշակութային, քաղաքական կյանքում գրաված տեղի ու դերի, այսինքն՝ այն ամենի մասին, ինչը մտնում է «լեզվավիճակ» և «լեզվի գոյության էկոլոգիական պայմաններ» հասկացությունների մեջ:

Հետևաբար, լեզվական կառուցվածքում արտացոլվում են և՛ խոսքային իրադրությունը (միկրոիրադրություն), և՛ լեզվավիճակն ու լեզվի գոյության էկոլոգիական պայմանները (մակրոիրադրություն): Քանի որ խոսքային իրադրությունն ու լեզվավիճակը որոշակի կառուցվածքով օժտված համակարգեր են, ուստի խնդիրը երկու կարգի՝ լեզվական և հասարակական կառուցվածքների միջև որոշակի կապի, փոխհարաբերության պարզաբանումն է, այլ կերպ ասած՝ երկու կարգի երևույթների նույնակերպության բացահայտումը:

Այս խնդրի լուծման համար անհրաժեշտ է պարզել.

1. Հասարակական ո՞ր երևույթներն են արտացոլում լեզվում:
2. Լեզվական ո՞ր երևույթներն են արտացոլում հասարակականը:
3. Լեզվական ո՞ր երևույթները հասարակական ի՞նչ երևույթներ են արտացոլում:

Քանի որ լեզուն տարբերակվում է միաժամանակ մի քանի ուղղություններով (տարածքային, հասարակական, գործառական, ժամանակային), հետևաբար լեզվի հասարակական տարբերակումների համակարգը միասնական լինել չի կարող. այն իր հերթին տարբերակված է և՛ ժամանակի մեջ, և՛ տարածականորեն (ամեն բարձու, ամեն բնակավայր կունենա հասարակական տարբերակների համակարգի իր սեփական առանձնահատկությունները), և՛ գործառականորեն (լեզվի հասարակական տարբերակվածությունը միատեսակ չի արտահայտվի օրինակ՝ գրական և խոսակցական լեզուներում): Ճիշտ է, ամեն լեզվի համար կարելի է գտնել հասարակական տարբերակվածության միայն իրեն բնորոշ առանձնահատկություններ, ընդհանուր, միասնական գծեր, սակայն հասարակական տարբերակների ամբողջական համակարգի վերհանումն ու ուսումնասիրությունը հանրալեզվաբանության վերջնական խնդիրներից է: Դրան հասնելու համար նախ անհրաժեշտ է ուսումնասիրել հասարակական տարբերակների համակարգը տարբեր վայրերում, բարձրանում, դրական, խոսակցական լեզուներում, լեզվի զարգացման տարբեր փուլերում և այլն:

Ներկայումս ուսումնասիրության ամենից նպատակահարմար, գործնականորեն ամենից արժեքավոր և մեթոդապես ամենից մշակված ձևը առանձին քաղաքների լեզվի հասարակական տարբերակվածության համաժամանակյա քննությունն է¹:

Քաղաքները (հատկապես արդյունաբերական խոշոր կենտրոնները, մայրաքաղաքները, հին պատմություն ունեցող, ավանդույթներով հայտնի քաղաքները) լեզվական միասնական, կուռ, հստակ արտահայտված, կանոնա-

¹ W. Labov, The social stratification of English in New York city, Washington, 1966; W. A. Wolfram, A sociolinguistic description of Detroit Negro speech, Washington, 1969; P. Trudgill, The social differentiation of English in Norwich, Cambridge, 1974.

վոր կառուցվածքով հանրություններ են, թեև բնակչության հասարակական կազմով շատ բազմազան ու ներկայացուցչական, բայց լեզվի նկատմամբ հասարակական վերաբերմունքով երբեմն բավականաչափ համասեռ ու միասնական:

Լեզվի զարգացման գործընթացում առաջատար դերը սովորաբար պատկանում է քաղաքներին (հատկապես մայրաքաղաքներին), քանի որ դրանք մշակութային ու կրթական կենտրոններ են, ամենից շուտ են արձագանքում լեզվական համակարգում տեղի ունեցող փոփոխություններին, նորարանություններին և յուրացնում դրանք, ընդունում իբրև նորմա, ունեն մշակութային ու լեզվական ազդեցության մեծ ոլորտ ու կշիռ, դրանց բնակչության լեզուն ամենից ավելի զերծ է բարբառային տարրերից:

Եթե խնդիրը մասնավորեցնենք հայերենի համար, ապա ամենից ավելի նպատակահարմար է իբրև լեզվական հանրություն վերցնել Երևանը: Ճիշտ է, Երևանի այսօրվա բնակչությունն աչքի է ընկնում իր հասարակական կազմի մեծ չափի տարասեռությամբ, խոսողների բարբառային պատկանելության բազմազանությամբ, սակայն դա չի խանգարում լեզվի նկատմամբ միասնական վերաբերմունքի, դիրքորոշման գոյությունը: Դրան նպաստում է նաև երևանացիների ազգային կազմի համասեռության բարձր աստիճանը:

Առայժմ հնարավոր չէ լեզվականի ու հասարակականի փոխհարաբերությունն ուսումնասիրելիս ներկայացնել մեկին ու մյուսին պատկանող երևույթները լիակատար ու սպառիչ (մի բան, որ լինելով հանրալեզվաբանական աշխատանքների վերջնական նպատակը, հնարավոր է իրականացնել միայն երկար նախապատրաստական աշխատանքներից և մեծածավալ զանգվածային ուսումնասիրություններից հետո), այլ՝ հատուկ ընտրված հատկանիշների ու միավորների որոշակի թվով: Սակայն այդ ընտրանքը պետք է կատարել այնպես, որ լեզվական ու հասարակական երևույթները ներկայացվեն համամասնորեն ու համարժեք չափով և ճիշտ պատկերացում տան լեզվի ու հասարակության կառուցվածքում իրենց գրաված տեղի մասին:

Լեզվական տարբերակների հետ հարաբերակցվող հասարակական հատկանիշները բազմաթիվ են ու բազմազան՝ հարցվողների տարիքը, կրթության մակարդակը, հասարակական դրությունը, դասակարգային պատկանելությունը, բարբառային ծագումը, կրթության լեզուն, ընտանիքի խոսակցական լեզուն, սեռը, ազգային պատկանելությունը, մասնագիտությունը, զբաղմունքը, եկամուտը, թաղամասային պատկանելությունը, ծնողների ծագման վայրըն ու հասարակական դրությունը, ռադիո և հեռուստահաղորդումներից օգտվելու, ընթերցանության հաճախականությունը և այլն: Սակայն սրանք բոլոր դեպքերում հավասար չափով էական չեն կարող: Կախված ժամանակից, հասարակական-տնտեսական կացութաձևից, երկրից, ժողովրդի ազգային առանձնահատկություններից, այդ հատկանիշները կարող են տարբեր արժեք ձեռք բերել լեզվական տվյալ հանրության համար²:

² Այս մասին նշված աշխատություններից բացի տե՛ս նաև. «Русский язык по данным массового обследования», М., 1974; R. W. Shuy, W. A. Wolfram and W. R. Riley, Field techniques in an urban language study, Washington, 1968; W. A. Wolfram and R. W. Fasold, The study of social dialects in American English, Engl. Gliffs, 1974; I. B. Robach, Étude socio-linguistique de la segmentation syntaxique

Որոշ հատկանիշներ ունեն հանրույթային արժեք, այսինքն բոլոր դեպքերում լինում են էական: Այդպիսիք են հարցվողների տարիքը, սեռը, հասարակական դրությունը, ծնողների բարբառային պատկանելությունը և այլն:

Պակաս ընդհանուր են այն հատկանիշները, որոնք սահմանափակվում են հասարակության զարգացման որոշ փուլերով: Այդպիսիք են հարցվողների կրթության մակարդակը, դասակարգային պատկանելությունը և այլն:

Կան հատկանիշներ էլ, որոնք էական կարող են լինել մասնավոր դեպքերում՝ լեզվական տվյալ հանրության առանձնահատկություններից կախված: Այդպիսիք են հարցվողների ընտանիքի խոսակցական լեզուն, կրթության վայրը և այլն:

Ամեն դեպքում, հատկանիշի էական կամ ոչ էական լինելը որոշելու համար պետք է հաշվի առնել տվյալ հանրությանը բնորոշ հասարակական, քաղաքական, մշակութային, տնտեսական, պատմական, աշխարհագրական պայմանները:

Հայտնի է, օրինակ, որ բնակավայրի բաժանումն ըստ թաղամասերի կարող է արտացոլվել լեզվում՝ տարբեր վայրերում և տարբեր ժամանակներում ունենալով հասարակական տարբեր հիմքեր: Որոշ դեպքերում դրանք կարող են կապված լինել թաղամասերի մասնագիտացման հետ, ինչպես, օրինակ, միջնադարյան քաղաքներում, ուր սովորաբար առանձնացվել են արհեստավորական տարրեր թաղամասեր: Այլ դեպքերում դրանք կապված են դասակարգային շերտավորման հետ՝ արքունական կամ իշխանական թաղամաս (միջնաբերդ, պալատ և այլն), հոգևոր շրջան (առաջնորդարան, եկեղեցի, հորակից շինություններ և այլն), արհեստավորական թաղամասեր, հտնախորշեր: Կան դեպքեր, երբ դրանք կապվում են ազգային տարբերությունների հետ, ինչպես այն քաղաքներում, ուր տարբեր ազգերի ներկայացուցիչներ կենտրոնացած են տարբեր թաղամասերում, ինչպես, օրինակ, Նյու-Յորքում, որտեղ առանձնացված են նեգրական Հաուլեմ թաղամասը, հետտոները: Երբեմն տարբեր թաղամասերում կարող են կենտրոնացած լինել գաղթականների տարբեր խմբեր, տարբեր իրենց բարբառներով: Լինում են նաև ուսանողական, արվեստագետների և այլ տիպի թաղամասեր: Բոլոր նման դեպքերում հարցվողների թաղամասային պատկանելությունը պետք է հաշվի առնվի իբրև էական հասարակական հատկանիշներից մեկը:

Ինչ վերաբերում է Երևանին, ապա քաղաքի բաժանումն ըստ թաղամասերի աննշան է, որը պայմանավորված է նրա սոցիալիստական ապրելակերպով և պատմական առանձնահատկություններով: Այդ բաժանումը համապատասխանաբար թույլ է արտացոլում լեզվում. մասնավորապես պետք է նշել այս երևույթի կապը վերջին ժամանակներում կատարվող մշակութային, տնտեսական տեղաշարժերի, բնակարանային զանգվածային շինարարության, քաղաքի հատակագծի փոփոխությունների, վերակառուցման, բարեկարգման, ներգաղթի ու ներհոսի հաշվին ազգաբնակչության արագ աճի հետ:

Հանրության ազգային (էթնիկական) տարբերակումը ևս կարող է լինել էական հասարակական հատկանիշներից մեկը: Երևանի համար դա նույնպես երկրորդական հատկանիշ է, որովհետև նախ՝ Երևանի ազգաբնակչության ճնշող

մասը հայեր են և միայն փոքր մասը՝ ռուսներ, ուկրաինացիներ, ադրբեջանցիներ, քրդեր և այլն: Երկրորդ՝ այդ ազգային փոքր խմբերը մասամբ են պահպանում իրենց լեզվական առանձնահատկությունները. մի կողմից՝ բոլոր ոչ հայերը ենթակա են հայերենի ազդեցությանը և մեծ մասամբ երկլեզվակիր են (խոսում են նաև հայերեն), մյուս կողմից՝ նշանակալից թվով ռուսական կրթություն ստացած հայեր, հայերենին անբավարար տիրապետելու պատճառով, նույնպես մասամբ են պահպանում իրենց ազգային լեզվական առանձնահատկությունները:

Այդ դեպքում որոշեք են երևանցիների լեզվում արտացոլվող հասարակական էական հատկանիշները: Իբրև այդպիսիք կարելի է առանձնացնել հարցվողների տարիքը, կրթությունը, հասարակական դրությունը, բարբառային հիմքը, ծնողների ծագման վայրն ու հասարակական դրությունը, ընտանիքի խոսակցական լեզուն, կրթության լեզուն և սեռը:

1. Ինչպես ասացինք, տարիքային տարբերությունների արտացոլումը լեզվում հանրությային նշանակություն ունի: Սա այն էական հատկանիշներից է, որը թույլ է տալիս պարզելու լեզվի զարգացման միտումներն ու ուղղությունը, մի բան, որ հանրալեզվաբանության հիմնական խնդիրներից է:

Երևանի լեզվում տարիքային տարբերությունների արտացոլումն ուսումնասիրելու համար իբրև նմուշ ընտրված հարցվողներին նպատակահարմար է բաժանել տարիքային երեք խմբի. ա) մինչև 1920 թ. ծնվածներ. բ) 1921—1945 թթ. ծնվածներ, գ) 1945 թ. հետո ծնվածներ: Այս բաժանումների համար հիմք են ընդունված քաղաքական-տնտեսական կյանքի կարևորագույն փոփոխությունները՝ 1920 թ. Հայաստանում սովետական իշխանության հաստատումը և Հայրենական մեծ պատերազմն ու նրա ավարտը:

Առաջինը նշանակալից է նրանով, որ սովետական իշխանության հաստատումից հետո սկսվեց կուլտուրական հեղափոխությունը, վերափոխումներ կատարվեցին կրթության, լեզվի ուսուցման ասպարեզներում, տեղի ունեցան լեզվական բարեփոխություններ, փոխվեց լեզունների կարգավիճակը՝ հայերենը դարձավ պետական լեզու, մեծացան նրա գործածության ոլորտը, նրանով ստեղծվող տպագիր արտադրանքի ծավալը և այլն: Երկրորդը նշանակալից է ոչ լեզվական՝ հասարակական, տնտեսական և մշակութային առումներով: Ետպատերազմյան շրջանը բնորոշվում է, նախ և առաջ, մարդկանց հոգեբանության մեջ կատարված փոփոխություններով (հատկապես անհատի պաշտամունքի վերացման, արվեստներում, գիտության մեջ տիրապետող գոհճիկ սոցիոլոգիզմից հրաժարվելու շնորհիվ), ինչպես նաև հասարակական կյանքի խոշոր տեղաշարժերով (քաղաքների բուռն աճ, քաղաքի ու գյուղի տարբերությունների համահարթում, կենսամակարդակի աճ), գիտատեխնիկական հեղափոխության ծավալումով, տնտեսական կյանքի փոփոխություններով:

Այսպիսով կունենանք երեք սերունդ:

Իհարկե, կարելի է դիմել նաև տարիքային ավելի փոքր բաժանումների (տասնամյակներով և այլն), այդ կախված կլինի հանրալեզվաբանական տրվյալ ուսումնասիրության առաջադրված ավելի նեղ խնդիրներից, ինչպես նաև նյութի հավաքման տեխնիկայի և կիրառվող մեթոդների նրբությունից, ճշգրտությունից ու հուսալիությունից:

2. Կրթությունը այն գործոններից է, որոնք լեզվում արտացոլվում են

խիստ արտահայտված տարբերակումների ձևով: Պատճառն այն է, որ կըրթությունը մեծ ազդեցություն է ունենում անհատի լեզվի վրա ինչպես հատուկ դասընթացների միջոցով լեզվական ունակությունների ուսուցման, մշակման, հարստացման, այնպես էլ՝ անհատի ընդհանուր զարգացման մակարդակի բարձրացման շնորհիվ:

Անհատի լեզվի վրա կըրթությունը կարող է ազդել մի քանի ուղղություններով՝ ըստ մակարդակի (տարրական, միջնակարգ, բարձրագույն), մասնագիտացման (հասարակական, բնական, տեխնիկական գիտություններ), ուսուցման հիմնական լեզվի, կրթական հաստատության որակի ու աշխարհագրական տեղադրության և այլն:

Մասնագիտացման առումով ներգործությունը սովորաբար համընկնում է անհատի աշխատանքի բնույթի, զբաղվածության ազդեցության հետ, որի սլատառով այն պետք է համարել ոչ էական հատկանիշ:

Ոչ էական պետք է համարել նաև կրթական հաստատության որակի ու աշխարհագրական տեղադրության ներգործությունը որպես լեզվում թույլ արտացոլվող և մասամբ այլ հատկանիշների հետ նույնացող գործոններ:

Կըրթության մակարդակի առումով Երևանի բնակիչներին կարելի է բաժանել երեք խմբի. ա) թերի միջնակարգ, բ) միջնակարգ, գ) բարձրագույն կըրթություն ունեցողներ:

Տարրական կըրթություն ունեցողներին հարմար չէ առանձնացնել, քանի որ դրանք սովորաբար կա՛մ երրորդ սերնդի ներկայացուցիչներ են և թվով աննշան (դրանք կամացվեն «թերի միջնակարգ կըրթություն ունեցողներ» խմբի մեջ), կա՛մ էլ կրտսեր դպրոցականներ (առաջին սերունդ), որոնք հարցման ենթարկվելու դեպքում (եթե օգտագործվող հարցաթերթիկներն այդ բանի հնարավորությունը տալիս են) նույնպես կամացվեն առաջին խմբի մեջ: Չեն առանձնացվել նաև թերի բարձրագույն կըրթություն ունեցողները, որպես սովորաբար ժամանակավոր, անցումային վիճակի ներկայացուցիչներ (ցածր կուրսերի ուսանողներ): Բարձրագույն կըրթությունը թերի թողածները աննշան թիվ են կազմում: Պետք է ենթադրել, որ ութամյա կըրթություն ունեցողներին առանձնացնելը ևս լեզվական նշանակալից տարբերակումներ չի բացահայտի:

3. Լեզուն տարբերակող կարևորագույն գործոններից է նաև այն, թե տվյալ անհատը ի՛նչ լեզվով է կըրթություն ստացել:

Երևանում կըրթությունը տարվում է հիմնականում երկու լեզվով՝ հայերեն և ռուսերեն, ընդ որում, այդ բաժանումը կապված չէ ազգային պատկանելության հետ: Հայկական և ռուսական կըրթություն ստացողները սովորաբար տարբերվում են միմյանցից և՛ հայերենին, և՛ ռուսերենին տիրապետման աստիճանով, այդ երկու լեզուների գործածության չափով, դրանց նկատմամբ ունեցած վերաբերմունքով, հոգեբանությամբ, սովորույթներով, ազգային ու քաղաքական հարցերի մասին ունեցած ըմբռնումներով: Եվ քանի որ ռուսական կըրթություն ունեցողները Երևանում զգալի թիվ են կազմում, անհրաժեշտ է այս հատկանիշը ևս հաշվի առնել ինչպես հարցվողների ընտրության, այնպես էլ լեզվի հասարակական տարբերակվածության ուսումնասիրման ժամանակ:

Ըստ այս հատկանիշի հարցվողները կբաժանվեն երեք խմբի. ա) հայկական, բ) ռուսական, գ) խառը կըրթություն ունեցողներ: Երրորդ խմբի մեջ կմըտնեն այն հարցվողները, ովքեր սովորել են և՛ հայկական, և՛ ռուսական կըր-

խական հաստատություններում (հայկական դպրոց և ուսական բուհ, ուսական դպրոց և հայկական բուհ կամ որևէ այլ հնարավոր տարբերակ)։

4. Նախորդ հատկանիշին համանման՝ երևանցիների լեզվի վրա ներգործում է այն հանգամանքը, թե ո՞րն է հարցվողի ընտանիքի հիմնական խոսակցական լեզուն։ Այս հատկանիշը, սակայն, պետք է տարբերել նախորդից երկու պատճառով. նախ՝ ոչ միշտ են այս երկուսը համընկնում իրենց տվյալներով, երկրորդ՝ ընտանիքի հիմնական խոսակցական լեզվի դեպքում կարևոր է ոչ միայն հայերենի ու ռուսերենի, այլև արևելահայերենի ու արևմտահայերենի, դրական լեզվի ու բարբառների փոխհարաբերության հարցը։

Հարցվողները կբաժանվեն չորս խմբի. ա) նրանք, ում ընտանիքի խոսակցական լեզուն է դրական արևելահայերենը, բ) դրական արևմտահայերենը, գ) որևէ բարբառ, դ) ռուսերենը։ Այլ հնարավոր դեպքերը նշանակալից չեն։

5. Լեզվի տարբերակումներ առաջ բերող գործոններից թերևս «ամենահասարակականը» հարցվողների հասարակական դրությունն է։ «Հասարակական դրություն» ասելով պետք է հասկանալ հարցվողի դասային պատկանելությունը, մասնագիտությունը և զբաղվածությունը։

Կարելի էր այս երեք հատկանիշներն ընդունել իբրև միմյանցից անկախ հարաբերակիցներ։ Սակայն ավելի նպատակահարմար է վերցնել այդ երեքի համակցությունը հետևյալ պատճառաբանությամբ։ Նախ՝ դասային պատկանելությունը որոշվում է մյուս երկուսի (մասնագիտության և զբաղվածության) հիման վրա։ Երկրորդ՝ մասնագիտությունը և զբաղվածությունը հաճախ նույնանում են (երբ հարցվողը աշխատում է իր մասնագիտությամբ), իսկ եթե չեն՝ նույնանում, ապա սովորաբար դրանցից մեկը ունենում է երկրորդական նշանակություն (երբ հարցվողը զանազան պատճառներով ստիպված է աշխատել ո՛չ իր մասնագիտությամբ, կամ՝ երբ երկար ժամանակ աշխատելով ո՛չ իր մասնագիտությամբ, հարցվողն արդեն ձեռք է բերել երկրորդ մասնագիտությունը և փաստորեն հրաժարվել առաջինից)։

Հարցվողներն այս հատկանիշով կբաժանվեն երեք խմբի. ա) բանվորներ, բ) ծառայողներ (բացի գ. կետում նշվածները), գ) մտավորականներ։

Մտավորականները, որոնք, ըստ էության, նույնպես ծառայողներ են, առանձնացված են որպես հասարակության առավել կրթված, մտավոր աշխատանքի հետ առավել կապված մասը։ Մտավորականներին մյուս ծառայողներից տարբերելու հատկանիշ է ոչ միայն աշխատանքի բնույթը, այլև բարձրագույն մասնագիտական կրթությունը։

«Ծառայողներ» խմբի մեջ մտցված են բոլոր նրանք, ովքեր անմիջականորեն կապված չլինելով նյութական բարիքների արտադրության հետ, չեն կատարում նաև որակավորված մտավոր աշխատանք։ Դրանք են՝ գրասենյակային աշխատողները, պետական ու կուսակցական զանազան հիմնարկությունների շարքային ծառայողները, մտավոր ցածր որակավորման աշխատանք կատարողները (գծագրողներ, մեքենագրողներ, լաբորանտներ և այլն), առողջապահության բնագավառի աշխատողները (սանիտարներ, բուժակներ, բուժքույրեր և այլն), սպասարկման ոլորտի ծառայողները (վարսավիրներ, գործակատարներ, վարորդներ և այլն)։

Հաշվի առնելով մտավորականության մասնագիտական բազմազանությունը, այդ խումբը կարելի է լրացուցիչ բաժանել երեք ենթախմբի. ա) բնական գիտությունների և տեխնիկայի բնագավառի մասնագետներ, բ) հա-

սարակական գիտությունների և արվեստի բնագավառի մասնագետներ (բացի Շ կետում նշվածները), Շ) հայոց լեզվի մասնագետներ և հայոց լեզվով ստեղծագործողներ: Այս նույն հենթախմբերի մեջ կբաշխվեն նաև ուսանողները:

6. Հարցվողների լեզվի վրա ավելի պակաս, բայց զգալի չափով ներգործում է ընտանիքի անդամների, հատկապես ծնողների հասարակական գրությունը: Այս հատկանիշի դեպքում բաժանումները կլինեն նույնը, ինչ նախորդի համար: Ավելանում է միայն «գյուղացիներ» խումբը, որի մեջ կմտնեն այդ դասակարգին պատկանողները (կոլտնտեսականներ, սովխոզի բանվորներ): Կյուղի բնակիչ ուսուցիչները և ծառայողները կբաշխվեն մյուս խմբերի մեջ:

7. Քանի որ երևանցիների միայն փոքր մասն է բնիկ, հետևաբար անհրաժեշտ է պարզել ոչ բնիկ երևանցիների լեզվի վրա մայրենի բարբառի (լեզվի) ազդեցության չափը, ինչպես նաև՝ բնիկ երևանցիների լեզվի առանձնահատկությունները ի տարբերություն եկվորների լեզվի:

Երևանցիների «բարբառային ծագումը» պարզելու համար անհրաժեշտ է հաշվի առնել այն վայրը (Երևանից բացի), որտեղ հարցվողն անց է կացրել իր մանկությունը կամ ապրել է ամենից երկար (ոչ պակաս հինգ տարի):

Հարցվողներն այս հատկանիշով նախ կբաժանվեն երկու խմբի. ա) նրանք, ովքեր ապրել են միայն Երևանում, բ) ապրել են նաև այլ վայրերում: Այս երկրորդ խումբը կբաժանվի երեք հենթախմբերի. ա) նրանք, ովքեր ապրել են արևելահայ բարբառային միջավայրում, բ) արևմտահայ բարբառային միջավայրում, գ) ոչ հայախոս միջավայրում:

8. Այս նույն բաժանումներին կենթարկվեն հարցվողներն ըստ այն հատկանիշի, թե որտեղից են իրենց ծնողները (որտեղ են անցկացրել մանկությունը կամ որտեղ են ամենից երկար ապրել):

9. Հանրալեզվաբանությանը հետաքրքրում է նաև այն, թե որքանով են տարբերվում երկու սեռի ներկայացուցիչներն իրենց լեզվով:

Պետք է հենթադրել, որ սեռային տարբերությունները երևանցիների լեզվում թույլ են արտահայտվում: Պատճառն այն է. որ զարգացած սոցիալիստական հասարակարգում տղամարդկանց և կանանց հասարակական դիրքն ու դերը շուրջն այնքան տարբերություններ, որ լեզվում արտացոլվեն խիստ արտահայտված տարբերական ձևով: Այս հենթադրությունը կարոտ է ստուգման:

Ասպարեզում եղած հանրալեզվաբանական ուսումնասիրություններում կարելի է գտնել նաև այլ հասարակական հատկանիշների՝ լեզվի հետ ունեցած հարաբերակցության բացահայտման փորձեր: Այսպես, օրինակ՝ «Ռուսաց լեզուն զանգվածային հետազոտության տվյալներով»³ աշխատանքում հաշվի է առնված նաև այն, թե ինչ չափով են հարցվողները լսում ռադիոհաղորդումներ: Սակայն հենց նույն հետազոտության արդյունքները ցույց են տալիս, որ այդ հատկանիշը միայն առանձին դեպքերում է զգալի չափով արտացոլվում լեզվում և մյուս հատկանիշների համեմատությամբ ունի երկրորդական նշանակություն: Պետք է հենթադրել, որ նմանապես նշանակալից քանակական տվյալներ չեն տա այնպիսի հատկանիշներ, ինչպես, օրինակ, հեռուստահաղորդումներ, թատերական ներկայացումներ, շարժանկարներ դիտելու, գրքեր ու պարբերականներ ընթերցելու, Երևանից ու հանրապետության սահմաններից դուրս ճանապարհորդելու հաճախականությունը և այլն:

³ «Русский язык по данным массового обследования».

Սկզբունքորեն լեզվի ամեն մի միավոր, լեզվական ամեն երևույթ կարող է հանդես գալ հասարակականորեն արժեքավորված տարբերակների ձևով: Գործնականում իրականանում է այդ հնարավորությունների մեծ մասը (եթե ոչ բոլորը): Առաջնությունների այդ բազմությունից հանրալեզվաբանական ուսումնասիրությունների համար ընտրանք կատարելիս անհրաժեշտ է առաջնորդվել հետևյալ սկզբունքներով:

1. Ընտրված երևույթները պետք է լինեն բավականաչափ ներկայացուցչական, այսինքն՝ ներկայացնեն լեզվի բոլոր մակարդակները:

2. Պետք է ունենան բավականաչափ կշիռ ու դեր ոչ միայն տվյալ մակարդակի, այլև լեզվական ողջ համակարգի մեջ:

3. Լեզվում չպետք է ներկայացված լինեն եզակի օրինակներով: Դեռ ավելին՝ ցանկալի է, որ դրանք լինեն բաց շարքեր:

4. Այդ երևույթները պետք է ներկայացվեն խոսքում բավականաչափ հաճախակի հանդիպող միավորների միջոցով:

5. Չպետք է ունենան հասարակական սահմանափակվածություն, այսինքն՝ դրանց գործածության ոլորտը պետք է ընդգրկի հասարակական բոլոր իմբերի, շերտերի լեզուն:

6. Պետք է ունենան հասարակական բավականաչափ ընդգծված արժեք. այսինքն՝ պարզ արտացոլեն հասարակության կառուցվածքը:

7. Ըստ հնարավորին պետք է զերծ լինեն բարբառային և ոճական արժեքավորվածությունից:

8. Պետք է հարմար լինեն ուսումնասիրության համար, տրվեն վերլուծության, համապատասխանեն կիրառվող մեթոդներին⁴:

Այս սկզբունքներից ելնելով, հայերենի լեզվական համակարգը հանրալեզվաբանական ուսումնասիրությունների մեջ ներկայացնելու համար կարելի է ընտրել հետևյալ հատկանիշները⁵.

Ա. Հնչյունաբանական.

ա) Հիմնական հատկանիշներ.

1. Ձայնեղների շնչեղ խլացում (թափուհի, հուշարձան):

2. Ձայնեղների խլացում (հարավային, դեղձ, այդ):

3. Գաղտնավանկ ը-ի ուժեղ կամ լրացուցիչ արտասանություն (սպանել, քննել, Շեքսպիր):

4. Բառասկզբի ո-ի և ե-ի (վո) և (յէ) արտասանություն բարդությունների մեջ և կ-, չ- նախամասնիկներից հետո (անտրակ, կերևամ):

5. Շեշտափոխական անկանոն հնչյունափոխություն (տարիով, ոսներ, զույնավոր):

բ) Լրացուցիչ հատկանիշներ.

⁴ Լեզվական հատկանիշների ընտրության սկզբունքների մասին նշված աշխատություններից բացի տե՛ս նաև. «Развитие фонетики современного русского языка», М., 1966; «Русский язык и советское общество», кн. 1—4, М., 1968; W. Labov. Sociolinguistic patterns, Philadelphia, 1972; Ն ու յ ի, Language in the inner city, Philadelphia, 1972:

⁵ Հնչյունաբանական և ձևաբանական հատկանիշներն ընտրելիս իբրև օժանդակ աղբյուրներ օգտագործել ենք. Բ. Ղ ա ր ա գ յ ու լ յ ա ն, Ժամանակակից հայերենի ուղղախոսությունը, Երևան, 1974, է. Ա ղ ա յ ա ն, Ժամանակակից հայերենի հոլովումը և խոնարհումը, Երևան, 1967, 2. Հ ա ր ո թ յ ու ն յ ա ն, Բայական զուգաձևերի վիճակագրական պատկերը Ժամանակակից հայերենում («Բանբեր Երևանի համալսարանի», 1975, № 3):

6. Խուլերի ձայնեղացում ն, մ, ր-ից հետո (ընկեր, ճանն, քրտնել)։

7. Դ, տ, ք-ի ուժեղ քմայնացում առաջին շարքի ձայնավորներից և յ-ից առաջ (ինստիտուտ, օգնություն)։

8. Ջ, ն, չ, ձ, ծ, ց-ի պարզեցում բաղաձայնից առաջ (աչք-աշկ)։

9. Բ-ի կոշտացում (կռճատել, վագր)։

10. Վերջնավանկային շեշտի փոխարեն վերջրնթեր շեշտի գործածություն։

11. Օժանդակ բայի հարցականով ձևերի գործածություն (գնում ե՞ս)։

Բ. Բառակազմական.

1. Համադրական բառակազմական ձևերի փոխարեն վերլուծական ձևերի և բառակապակցությունների գործածության միտում (գլխաբաց / գլուխը բաց, բացել / բաց անել)։

2. Բառակազմական միջոցի փոխարեն քերականական միջոցի գործածության միտում և ընդհակառակը (զգուշորեն / զգուշությամբ, անհնար է / հնարավոր չէ)։

3. Բառակազմական մասնիկների սղման միտում (մորքուր, հարսեր, ձեռով)։

4. Բառակազմական գրական ձևերի փոխարեն խոսակցական ձևերի գործածություն (ընկերաբար / ընկերավարի, հյուսիս / հյուսիսի)։

Գ. Ձևաբանական.

ա) Հիմնական հատկանիշներ.

1. Մի շարք բայերի հոգնակի հրամայականը անցյալի փոխարեն ներկայի հիմքով կազմելու միտում (խմե՛ք, լվացվե՛ք)։

2. Արգելական հրամայականը հաստատականից կազմելու միտում (մի՛ երևացեք, մի՛ դիր)։

3. Պատճառական և մի քանի անկանոն բայերի անցյալ կատարյալը ոչ ցոյական հիմքով կազմելու միտում (կորցրի, տվի)։

4. «Ե» խոնարհման պարզ (նաև կրավորակերպ) բայերի պատճառականը -եցն-ի փոխարեն -ացն-ով կազմելու միտում (քնացնել, սիրահարացնել)։

5. Պետք է եղանակիչի համեմատ պիտի-ի ավելի հաճախակի գործածության միտում։

6. Բաղադրյալ ստորոգյալի օժանդակ բայի եզակի երրորդ դեմքի ժխտական չէ ձևի փոխարեն չի-ի գործածության միտում և ընդհակառակը (պետք չի, տանը չի)։

7. Սեռական հոլովի քիչ տարածված ձևերի փոխարեն -ի-ով ձևեր կազմելու միտում (անկողնի, ամսի, ձյունի, դուստրի)։

8. Գործիական հոլովի -ամբ-ով ձևի փոխարեն -ով-ով ձևի գործածության միտում (որոշումով, արյունով, մեծությունով)։

բ) Լրացուցիչ հատկանիշներ.

9. Կրավորական և մի քանի անկանոն բայերի հարակատարի ժխտականում օժանդակ բայի ետադաս գործածության միտում (որոշված չի, սկսված չի)։

10. Մի քանի բայերում ա խոնարհիչի փոխարեն ե-ի գործածության միտում (ափսոսել, ասեցի)։

11. Ինքը դերանվան թեք ձևերում ե հոլովիչի փոխարեն ա-ի գործածության միտում (իրանց, իրանից)։

12. Անձնական դերանունների բացառական, գործիական, ներգոյական հոլովներում առանց ա-ի ձևերի փոխարեն -ա-ով ձևերի գործածության միտում (մեղանից):

Ի. Շարանյանական.

1. Համադրական ձևերի համեմատ վերլուծական ձևերի ավելի հաճախակի գործածության միտում (մտքում/մտքի մեջ, սեղանին/սեղանի վրա):

2. Գրքային ձևերի փոխարեն խոսակցական ձևերի գործածության միտում (դնում եմ տեսնելու/գնում եմ տեսնեմ):

3. Փոխակերպական գործողությունների ենթարկված նախադասությունների գործածություն (կրավորական կառուցվածքով, դերբայական դարձվածով. շրջուն շարադասությամբ, ղեղչված անդամներով և այլն):

Ե. Բառապաշար.

1. Հայերեն նորաստեղծ բառերի գործածություն:

2. Օտարաբանությունների գործածություն:

3. Ժարգունային բառերի գործածություն:

4. Բարբառային բառերի գործածություն:

5. Գրքային բառերի գործածություն:

Զ. Խմաստաբանական.

1. Մի քանի իմաստային դաշտերի կառուցվածք (դույներ, կենդանիներ, բույսեր, մրգեր, տնային գործածության իրեր, ազգակցություն ցույց տվող բառեր և այլն):

2. Հոմանշային շարքերի ձևավորում:

3. Հականշային շարքերի ձևավորում:

Ինչ խոսք, այս թվարկումը հեռու է սպառիչ ու անթերի լինելուց, սակայն յի վիճակի է պատկերացում տալու հայերենի հասարակական տարբերակվածության ընդհանուր պատկերի մասին:

Այսպիսով, ունենալով այս երկու կարգի՝ լեզվական ու հասարակական հատկանիշները, հանրալեզվաբանական ուսումնասիրությունը նպատակ է դրնում պարզել դրանց հարաբերակցությունը, փոխադարձ կապն ու պայմանավորվածությունը: Նման ուսումնասիրության արդյունքները թույլ կտան պարզելու լեզվի մի շարք զուգաձևությունների իսկական արժեքն ու տեղը լեզվական համակարգում, որոշելու, թե այդ զուգաձևություններից ո՞րը պետք է համադրել գրական նորմա, իսկ ո՞րը՝ նրա խոսակցական կամ այլ կարգի տարբերակ: Հարցվողների տարիքի ու հասարակական դիրքի համաձայն լեզվական տարբերակների բաշխման ուսումնասիրության հիման վրա հնարավոր է պարզել նաև լեզվի զարգացման ընդհանուր միտումները և դրանց ակունքները, այդ զարգացումը պայմանավորող արտալեզվական գործոնները:

ОСНОВНЫЕ ПРИНЦИПЫ ИССЛЕДОВАНИЯ СОЦИАЛЬНЫХ ВАРИАНТОВ АРМЯНСКОГО ЯЗЫКА

ОГАНЕС ЗАКАРЯН

Резюме

Для выяснения корреляции языковых и социальных явлений необходимо 1) определить набор тех языковых признаков, которые отражают социальные явления; 2) определить набор тех социальных признаков,

которые отражаются в языке; 3) выявить распределение языковых вариантов в зависимости от социальных характеристик его носителей.

Целесообразно выделить следующие основные социальные и языковые признаки для изучения социальной дифференциации армянского языка в городе Ереван. Из социальных характеристик информантов основными являются: 1) возраст, 2) уровень образования, 3) основной язык образования, 4) основной разговорный язык семьи, 5) социальное положение, 6) диалектное происхождение, 7) социальное положение родителей, 8) диалектное происхождение родителей, 9) пол.

В выборке языковых признаков представлены фонологическая, словообразовательная, морфологическая, синтаксическая уровни, а также семантика и лексика разговорной формы современного армянского языка.